ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

2043-Ա/2 **08.11.2022 թ.**

«ԱՐՏԱՎԱԶԴ ՓԵԼԵՇՅԱՆԻ «ԻՄ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԴԱՇՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ՌՈՒՍԵՐԵՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակման ծրագիրն իրականացնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») հատկացնել է 2280.0 հազար (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամ՝ Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակման ծրագիրն իրականացնելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր),

4. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
------- ------- 2022 թ.
N ----------հրամանի

ԾՐԱԳԻՐ

Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակության աշխատանքների

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Տերյան 72
3	Ծրագրի անվանում	Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակում
3.1	Բովանդակություն	«Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» գեղարվեստական և վավերագրական կինոյի հայտնի ռեժիսոր, սցենարիստ, դերասան, համաշխարհային կինեմատոգրաֆիայի դասական Արտավազդ Փելեշյանի ռուսերեն աշխատությունն է: Սա գիտական աշխատանք է, որը հեղինակից խլել է կես դար, ինչպես նաև ահռելի ջանքեր: Գրքում Փելեշյանը շատ ոլորտների, երևույթների, հասկացությունների է անդրադարձել: Բնության մեջ կան կոդավորված երևույթներ, որոնք վերջնական բացատրություն չունեն, իսկ բացահայտումները պայմանական են: Նա գրել է իր մտորումները եգիպտական բուրգերի, ադամանդի, տիեզերքի, երազի, կրոնի, խորհրդանիշերի մասին: Հիմնվել է տարբեր աղբյուրների, կարծիքների վրա, բայց դրանց կողքին ներկայացրել իր տեսակետը, իր մոտեցումներն ու եզրահանգումները: Դրանք մեկնաբանել ու վերլուծել է մանրամասնորեն՝ հիմնավորելով, թե ինչու է հակառակվում գիտության մեջ տարածված, ընդուված թեզերին, կարծիքներին կամ բանաձևերին:

3.2	Նպատակ	Նախագծի իրականացման նպատակը Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակության լույսընծայումն, հեղինակի ժառանգության հանրայնացումն ու արժևորումը:
3.3	Անցկացման ժամկետ	2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր
3.4	Անցկացման վայր	ք. Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Նախագծի վերջնական արդյունքում լույս կտեսնի Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակությունը
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Արտավազդ Փելեշյանի «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» ռուսերեն աշխատության վերանայված հրատարակության 500 օրինակ: